Արձանագրություն N4

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/44 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան,

20.05. 2021թ.
ժամը՝ 17.30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մելիքյան,
Հանձնաժողովի անդամ՝ Ն. Պողոսյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դրամբյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հ. Մելիքյանը

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Ն. Մելիքյան,

---

1. Ընդունել Ի գիտություն, որ Ընթացակարգը 14.04.2021թ-ին կրկին բողոքարկվել էր <<Մեգիէլ>> ՍՊԸ-ի կողմից: Բողոքը կրկին բավարարվել է մասնակի: Առաջարկվում է Հանձնաժողովին ուսումնասիրել բողոքի վերաբերյալ կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 որոշումը և կայացնել համապատասխան որոշում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0

2. Ուսումնասիրելով ԳԲՔԱ-ԼՕ-2021/30 որոշումը և ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջները, հանձնաժողովը որոշեց հրավերը համապատասխանեցնել ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին, կատարել փոփոխություններ.

-ընթացակարգի 1-ին, 7-րդ, 8-րդ և 11-րդ չափաբաժիններում կատարել տեխնիկական բնութագրերի հետևյալ փոփոխությունները.

1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերից հանել <<Արյան ծավալային հոսքի արագությունը ոչ պակաս քան 16,7 մլ/վ:>> ցուցանիշը,

7-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում ներառված <<ամենակարճը ոչ ավել 38մմ>> բառերը փոխարինել հետևյալով<<ամենաերկարը՝ ոչ պակաս քան 38մմ>> բառերով,

11-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերը ամբողջությամբ փոխել և սահմանել հետևյալը <<Սրտի աորտայի փականի բիոլոգիական պրոտեզ, միտրալ և աորտալ, խոզի պերիկարդից, աորտալ փականի չափերը՝ 21, 23, 25, 27 և 29մմ ըստ պատվերի, միտրալ փականի չափերը՝ 25, 27, 29, 31 և 33մմ ըստ պատվերի: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:>>

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց հաստատել փոփոխված հրավերի և հայտարարության տեքստը

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4 Հանձնաժողովը որոշեց հաստատել հրավերի փոփոխության մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել 07.06.2021թ. ժամը 12.00-ին, «Նորք Մարաշ» Բ.Կ.» ՓԲԸ-ի վարչական շենքում, ք. Երևան, Արմենակյան 108/4, հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.		
Նախագահ՝		Ն. Մելիքյան
Անդամներ՝		Ն. Պողոսյան
	—	Հ. Մելիքյան
Քարտուղար՝		Կ. Դրամբյան